

Հ Ե Լ Է Ն Է

ՈՐԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ՀԱՆԴԵՍՍ

(Շար. տես. Բզմ. 1920 էջ 40)

ՏԵՍԻԼ Ե.

ԱՐԴՈՒԱՐԴ, ՀՐԱՆՑ

ԱՐԴՈՒԱՐԴ

Գնա՛ իմացուր ձերակուտին Պէթիկէսին սպառա-
նալիքն և իմ պատասխանս:

ՀՐԱՆՑ

Ուրեմն կ'ընդունի՞ս յայտնապէս զպատերազմ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Այ՛, այս գիշերս վերջինն պիտի ըլլայ, Հրանտ,
Մականդոնացոց կենացն. վաղը առաւօտուն մենք
Հայքս թշնամեաց դիականցը վրայ մեր ռազմը
դրած, հպարտութեամբ պիտի ողջունենք մեր
ազատ արեգակը: Սակայն Մականդոնացի բանակ
մը դէպ ի յԱրմաւիր կը մօտենայ. դու գնա՛
պատրաստէ Հայոց զունդերը. կէսն Անահտայ
անտառին մէջ դարանի՛ դիր, իսկ միւս մասն
ալ պարսպաց պահպանութեան պարապի: Այլ
ինչ պատճառ Հելէնէ օրիորդը դէպ ի մեզ կը
բերէ... դու գնա՛ ազգ տուր ձերակուտին, ես ալ
ընդ հուպ Արտաւազը առնլով իւր քով կը դառ-
նամ: (Հրանտ կ'երդայ)

ՏԵՍԻԼ Զ.

ԱՐԴՈՒԱՐԴ, ՀԵԼԷՆԷ

ԱՐԴՈՒԱՐԴ (մեկուսի)

Ո՛հ, ի տես սորա վայրկեան մը ամէն պարտքս
սոռնալով, հայր ըլլալս կը յիշեմ... Արտաւազդ
Հելէնէ... Ինչ հարուած ձեզ կը պատրաստեմ.
ձեր սիրտէն վազելու եղած արիւնն՝ նախ իմ
կողէս պիտի բոխէ:

ՀԵԼԷՆԷ (մօտենալով)

Տէ՛ր իշխան, Արտաւազդայ և իմ անունն լսե-
լեացս հնչեցին... Բայց գիտե՛ս արդեօք ո՛ր իցէ
Արտաւազդ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Այս առաւօտ ես զինքն տեսայ... Բայց ինչո՞ւ
այդպէս խռոված ես:

ՀԵԼԷՆԷ

Այս առաւօտ ես ալ զինքն տեսայ, Բայց եր-
կինք, երբէք չէի փափաքեր տեսնել զինքն այն
վիճակին մէջ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Ի՞նչպէս... ինչո՞ւ, Հելէնէ, արտօնողդ՝ խօսող
կ'ընդմիջեն... ան, խօսէ՛, մի թողուր թշուառ
հայր մը մահու տագնապի մէջ:

ՀԵԼԷՆԷ

Թող որ սա արտօնքս թափին, տէր. զի երբ
արիւն պիտի վազէ, միթէ՛ կրնան դադրիլ արտ-
օնքս:

ԱՐԴՈՒԱՐԴ (զարհուրած)

Ի՞նչ ըսել կ'ուզես... (մեկուսի) արդեօք յայտ-
նամ է Արտաւազդ մեր խորհուրդը:

ՀԵԼԷՆԷ

Տեսայ զինքն յուսահատեալ և երկաթ ի ձե-
ռին, զինքն զարնել կը խնդրէր:

ԱՐԴՈՒԱՐԴ (մեկուսի)

Ո՛վ դէք... Թշուառ որդի. (բարձր) իսկ դո՞ւ
Հելէնէ...

ՀԵԼԷՆԷ

Ես իւր ձեռքն անձնասպան ըլլալէն արգիւեցի.
ինքն առանց պատճառքն ինձ յայտնելու խոյս
տուաւ քովէս, մահազոյժ երկաթին իւր հետ տա-
նելով, անգրեկ հոս հոն կը վազեմ պալատիս
մէջ. մինչև զպարտէզն և պալատտ շուրջ պա-
տող զանառն որունցի, վերջապէս գտայ զինքն
ի գերեզմանատունն Հայոց թագաւորաց. իւր
հեծկլտանքս զիս մինչև իւր քովս առաջնորդեցին.
հոն, իւր մօրն չիրմին քով ծնեացն վրայ ինկած
կ'արտասուէր, կը հառաչէր և դաժան նայուածք
մը կը ձգէր սպիտակ մարմարինին վրայ, որ
իւր ծնողին ցուրտ ոսկերթը կը ծածկէ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Ահ... չարունակէ՛ Հելէնէ:

ՀԵԼԷՆԷ

Զիս տեսնելուն՝ իբրև որսորդի փողէն շրտնեալ
եղջերու մը, յանկարծ ոստնլով չիրմանց մէջ
աներևոյթ եղաւ: Գիտե՛ս արդեօք, տէր իշխան,
իւր յուսահատ տխրութեան պատճառը, գուցէ
հայրական սիրտէդ գաղտնի չ'են իւր վիշտքն.
դարձեալ միթէ՛ չի՞ք հնար զինքն մխիթարելու և
միտքէն հալածելու այդ մահաատու փափաքը...
Ի՞նչ, դո՞ւ ալ լուռ կը կենաս... ո՞վ երկինքը,
համարացեալ են ուրեմն հայօր և աննայն լեռուք:

ԱՐԴՈՒԱՐԴ (մեկուսի)

Ի՞նչ պատասխանել այժմ, ո՞վ դէք:

ՀԵԼԷՆԷ

Դո՛ւ ալ կը հառաչես... իսկ ինչո՞ւ աչքդ դէպ
չ'երկինս կը հարձընես. միթէ՛ հոն խիստ ճա-
կատագիր մը կը կարդաս՝ իմ աչացս միայն
աներևոյթ:

ԱՐԴՈՒԱՐԻ

Դո՛ւստոր իմ նազելի... (մեկոռնի) և իմ ձեռքէս պիտի մտնի... (քայլաձր) Կ'ըսես ուրեմն թէ դու գինքն ազատեցիր, Հելէնէ:

Հելէնէ

Այո՛. բայց այժմ... Թերևս հիմայ որ ես հետդ վասն իւր կենացն կը վարանիմ... գուցէ հիմայ ինքն իւր մօրն քով անշունչ պառկած է... (մեկոռնի) ո՛հ, սիրելիդ իմ Արտաւազգ:

ԱՐԴՈՒԱՐԻ

Հանգարտէ Հելէնէ. Արտաւազգ խոտաղաւ ինձ և գիշերուրէն առաջ քովս պիտի գայ. հանգարտէ՛ դուստր իմ, հայրն պիտի հսկէ աշաւուրջ իւր որդւոյն վրայ: (մեկոռնի) Ո՛հ, պէտք է որ հիմայ գինքն տեսնեմ:

Հելէնէ (վազելով Արդուարդայ ձեռքը կը բռնէ)

Ա՛հ, եթէ գինքն գտնաս, մի՛ թողուր որ քովէդ հեռանայ, մի՛ թողուր գինքն առանձին, թափանցէ իւր սիրտին զազտնի վիշտը և ջանա գինքն միւրթարելու:

ԱՐԴՈՒԱՐԻ

Հանգիտ եղիր, Հելէնէ, խնդիրդ պիտի կա... տարեմ, որ և իմ պարտքն է:

Հելէնէ (Արդուարդին ձեռքը համբուրելով)

Ո՛հ, շնորհակալ եմ, տէր իշխան... (մեկէն քառամիկով մեկոռնի) Երկինք, Բնչպէս կը համբուրեմ ես սա ձեռքն որ մօրս արեան մէջ թաթխեցին... ո՛հ, հայր իմ, Բնչ վէրք տուիր այս առաւօտ իմ սրտին: (ձեռքը քողովով ստկրմամբ ետ կը քաշուի)

ԱՐԴՈՒԱՐԻ

Ինչ ունիս, Հելէնէ...

Հելէնէ

Ձ'եմ գիտեր, սակայն երկիւղ մը ինձ կ'ազդեն ձեռք քո, հրաշքի երկաթի պէս շրթուներս այրեցին:

ԱՐԴՈՒԱՐԻ (մեկոռնի)

Ո՞վ դիք, կը քստմնիմ... արդեօք... (քալաձր) Բնչպէս...

Հելէնէ

Արդարեւ դո՛ւ իցես մօրս սպանողն...

ԱՐԴՈՒԱՐԻ (զարհուրած)

Ի՛նչ կ'ըսես... Ինչպիսի՞ հարցմունք, Հելէնէ:

Հելէնէ (խեղճիւրով)

Արդարեւ այժմ միտքս կը բերեմ այն ահաւոր գիշերը... տղայ է՛ի հօրս գիրկին մէջ... կը յիշեմ

այն դէմքը... այո՛, սաստիկ տապաւորութիւն մը թողուց այն դէմքն երեակայութեանս մէջ... այո՛, ինքն էր որ մայրս սպանելէն ետեւ սուր ի ձեռքն հօրս ետեւէն ինկած զմեզ կը հալածէր: (դարձեալ զարհուրանք ետ կը քաշուի)

ԱՐԴՈՒԱՐԻ (մեկոռնի)

Ո՛հ, անշուշտ, հեղափոխութիւն իրեն պատմած է... (քալաձր) Հելէնէ, ինչո՞ւ այդ թաղուած դէպքն այսօր գերեզմանի խորէն դուրս կը հանես:

Հելէնէ (այլապէս ինքնիւրեք)

Ատե՛լ գինքն... աւա՛ղ... զի միանգամայն Արտաւազգին հայրն է:

ԱՐԴՈՒԱՐԻ (մեկոռնի)

Ո՛հ հայրենիք իմ, Բնչ զո՛հ ինձմէ կը պահանջէ:

Հելէնէ (սքափելով)

Երթանք, տէ՛ր իշխան, գտնաւու զԱրտաւազգ. փրկենք նախ գինքն իւր յուսահատ կատաղութենէն՝ եթէ արդէն չէ անազան: (կ'ալլան)

ՀԱՆԳԷՍ ԵՐՐՈՐԻ

Հելէնէի պառկելու խոցը. գիշեր է, գաղտնի դռն մը տապաստակին վրայ. դռն մ'ալ խոր:

ՏԵՍԻԼ Ա.

Հելէնէ (առանձին անկողնոյն վրայ նստած է մտաւտեղ)

Ի գո՛ւր արջս փակել կը ջանամ, որպէս զի վիշտերս մոռնամ, սակայն կարծեմ թէ արտեալ նուաճս հրաշքի ածուխներու վրայ կը հանգչին. հազիւ թէ գլուխս բարձիս վրայ կը դնեմ, գաժան անուշք, իսկութեան աւելի անապօրոյն, միտքս և երեակայութիւնս կը պաշարեն: Ո՛հ անհնար է քուն ըլլալ, երբ վիշտ մ'արթուն է սրտին մէջ... Առաւօտանց ի վեր որչափ ա՛նկնկալ դէպք իրարու կը յաջորդեն, իւր թէ զիս տազնապելու բաւական չ'ըլլային սիրականս ինչ կենացն համար զգացած Երկիւղս և հօրս քէնն: Ա՛հ, հայր իմ, Բնչ ետ տանջանք տանջանացս վրայ աւելցուցիր՝ գերեզմանական լուռութիւն մը խոսեցընելով. միթէ անհանգիստ պիտի ննջէին մօրս ոսկերքն իրենց շիրմին մէջ, կամ միթէ թափառական պիտի չ'ըլլէր ծնողիս ստուերն դժոխաց փախնց վրայ, եթէ դուստրն այդ ահաւոր իսկութեան մար անտեղեակ. անգու՛թ հայր, կշռեցիր տուած հարուածք... ո՛հ ներք ինձ, սիրելի ծնող, կը ցնորեմ, կ'անիրարաւմ քեզի դէմ. միթէ պէտք չ'էր որ գիտնայի մօրս դաւաճանին անունը. Արդուարդ... անուն չարագուշակ. ո՛հ

ԱՐԴՈՒԱՐԻ

Դո՛ւստոր իմ նազելի... (մեկոռնի) և իմ ձեռքէս պիտի մտնի... (քայլաձր) Կ'ըսես ուրեմն թէ դու գինքն ազատեցիր, Հելէնէ:

Հելէնէ

Այո՛. բայց այժմ... Թերևս հիմայ որ ես հետդ վասն իւր կենացն կը վարանիմ... գուցէ հիմայ ինքն իւր մօրն քով անշուշտ պառկած է... (մեկոռնի) ո՛հ, սիրելիդ իմ Արտաւազգ:

ԱՐԴՈՒԱՐԻ

Հանգարտէ Հելէնէ. Արտաւազգ խոտադաւ ինձ և գիշերուրէն առաջ քովս պիտի գայ. հանգարտէ՛ դուստր իմ, հայրն պիտի հսկէ աշաւուրջ իւր որդւոյն վրայ: (մեկոռնի) Ո՛հ, պէտք է որ հիմայ գինքն տեսնեմ:

Հելէնէ (վազելով Արդուարդայ ձեռքը կը բռնէ)

Ա՛հ, եթէ գինքն գտնաս, մի՛ թողուր որ քովէդ հեռանայ, մի՛ թողուր գինքն առանձին, թափանցէ իւր սիրտին զազտնի վիշտը և ջանա գինքն միւրթարելու:

ԱՐԴՈՒԱՐԻ

Հանգիստ եղիր, Հելէնէ, խնդիրդ պիտի կա... տարեմ, որ և իմ պարտքս է:

Հելէնէ (Արդուարդին ձեռքը համբուրելով)

Ո՛հ, շնորհակալ եմ, տէր իշխան... (մեկէն քառամիկով մեկոռնի) Երկրե՛ք, Բնչպէս կը համբուրեմ ես սա ձեռքն որ մօրս արեան մէջ թաթխեցին... ո՛հ, հայր իմ, Բնչ վէրք տուիր այս առաւօտ իմ սրտին: (ձեռքը քողովով ստկրմամբ ետ կը քաշուի)

ԱՐԴՈՒԱՐԻ

Ինչ ունիս, Հելէնէ...

Հելէնէ

Ձ'եմ գիտեր, սակայն երկիւղ մը ինձ կ'ազդեն ձեռք քո, հրաշքի երկաթի պէս շրթուներս այրեցին:

ԱՐԴՈՒԱՐԻ (մեկոռնի)

Ո՞վ դիք, կը քստմնիմ... արդեօք... (քալաձր) Բնչպէս...

Հելէնէ

Արդարեւ դո՛ւ իցես մօրս սպանողն...

ԱՐԴՈՒԱՐԻ (զարհուրած)

Ի՛նչ կ'ըսես... Ինչպիսի՞ հարցմունք, Հելէնէ:

Հելէնէ (խեղճիւրով)

Արդարեւ այժմ միտքս կը բերեմ այն ահաւոր գիշերը... տղայ է՛ի հօրս գիրկին մէջ... կը յիշեմ

այն դէմքը... այո՛, սաստիկ տապաւորութիւն մը թողուց այն դէմքն երեակայութեանս մէջ... այո՛, ինքն էր որ մայրս սպանելէն ետեւ սուր ի ձեռքն հօրս ետէն ինկած զմեզ կը հաւաքէր: (դարձեալ զարհուրանք ետ կը քաշուի)

ԱՐԴՈՒԱՐԻ (մեկոռնի)

Ո՛հ, անշուշտ, հեղափոխութիւն իրեն պատմած է... (քալաձր) Հելէնէ, ինչո՞ւ այդ թաղուած դէմքն այսօր գերեզմանի խորէն դուրս կը հանես:

Հելէնէ (այլապէս ինքնիւրեմը)

Ատե՛լ գինքն... աւաղ... զի միանգամայն Արտաւազգին հայրն է:

ԱՐԴՈՒԱՐԻ (մեկոռնի)

Ո՛հ հայրենիք իմ, Բնչ զո՛հ ինձմէ կը պահանջէ:

Հելէնէ (սքափելով)

Երթանք, տէր իշխան, գտնաւու զԱրտաւազգ. փրկենք նախ գինքն իւր յուսահատ կատաղութենէն՝ եթէ արդէն չէ անազան: (կ'ալլան)

ՀԱՆԳԷՍ ԵՐՐՈՐԻ

Հելէնէի պառկելու խոցը. գիշեր է, գաղտնի դռն մը տապաստակին վրայ. դռն մ'ալ խոր:

ՏԵՍԻԼ Ա.

Հելէնէ (առանձին անկողնոյն վրայ նստած է մտաւտեղ)

Ի գո՛ւր արջս փակել կը ջանամ, որպէս զի վիշտերս մոռնամ, սակայն կարծեմ թէ արտեալ նուաճս հրաշքի ածուխներու վրայ կը հանգչին. հազիւ թէ գլուխս բարձիս վրայ կը դնեմ, գաժան անուշք, իսկութենէ՛ն աւելի անապօրոյն, միտքս և երեակայութիւնս կը պաշարեն: Ո՛հ անհնար է քուն ըլլալ, երբ վիշտ մ'արթուն է սրտին մէջ... Առաւօտանց ի վեր որչափ ա՛նկնկալ դէպք իրարու կը յաջորդեն, իւր թէ զիս տագնապելու բաւական չ'ըլլային սիրական նիս կենացն համար զգացած Երկրե՛ք և հօրս քննն: Ա՛հ, հայր իմ, Բնչ երբ տանջանք տանջանացս վրայ աւելցուցիր՝ գերեզմանական լուռութիւն մը խոսեցընելով. միթէ՛ անհանգիստ պիտի ննջէին մօրս ոսկերքն իրենց շիրմին մէջ, կամ միթէ՛ թափառական պիտի չ'ըլլէր ձեռքիս ստուերն դժոխաց փախնց վրայ, եթէ դուստրն այդ ահաւոր իսկութեան մնար անտեղեակ. անգո՛ւթ հայր, կշռեցիր տուած հարուածք... ո՛հ ներք ինձ, սիրելի ծնող, կը ցնորեմ, կ'անիրարեմ քեզի դէմ. միթէ՛ պէտք չ'էր որ գիտնայի մօրս դաւաճանին անունը. Արդուարդ... անուն չարագուշակ. ո՛հ

ինչո՞ւ Արտաւազդին հայրն ես, ինչո՞ւ զիս ալ դուստրդ կը կոչես, երբ մօրս դահիճն եղած ես... իսկ ես զքեզ հայր կը կոչի՛մ... դահիճ մը... Ի՞նչ դէժ, միթէ գիշերս երկայն պիտի տե՛ն. միթէ սա արհաւիրք լի գիշերս չի՞ պիտի ունենայ լուսաւոր և խաղաղաւէտ առաւօտ մը: Այ տարակոյս չ'ունիմ. ահաւոր վիշտ մը զԱրդուարդ և զԱրտաւազդ գրաւած է. գաղտնի խորհուրդ մը զիրենք կը խռովէ... Բնէ արդեօք: Հայրս ալ խռոված է. Արդուարդայ հետ տեսաւորութենէն վերջը. անընդհատ սրահին մէջ տաքնապաւ կը ճնմէ. տեսայ զինքն որ շարունակ անհամբեր՝ ասքը պառտուհանէ դուրս, Անահայն խուրական անտառին վրայ կը ձգէր, իբր թէ անտառին խորէն ակնկալութեան մը սպասէր, և կամ վրէժխնդիր մը՝ որ կնոջն դաւանանք պիտի պատժէ... Ո՛ր դարձեալ միւսքս կը ցնորին... կ'ըսեն որ թշնամութիւն միւսանգամ Մակեդոնացւոց և Հայոց մէջ պիտի սկսի. իսկ եթէ բուհազատուիմ հօրս հետ զԱրտաւազդ թողուլ և մեկնիլ... Բնէ, թողուլ զԱրտաւազդ... ո՛հ սեպիծալ թշնամութիւն, քէն մահացու. սակայն Հայաստան Մակեդոնիայէն աւելի սիրելի է ինձ, զոր չ'եմ ճանչնար. Հայաստան... ո՛հ, իմ հայրենիքս է. հոս են իմ որդւոսն և խանձարուրքս, հոս են մօրս ոսկերքն, հոս նաև Արտաւազդ, հոս պիտի ըլլայ և իմ գերեզմանս: Փայլակ մը կը շարքէ. Հելենէ դէպ ի պատուհանը մտնեալով: Ի՛նչ, Բնէ մութ գիշեր. երկնից երեսն ալ սրտիս պէտ ամպոտած է: (Հեռուէն որդուռով) Մորիկ մը կը պատրաստուի... (յուս կենդանով ականց կը դնէ) ոտից դղորդին կայ դուրսը... մէկը կը քալէ. (կ'երթայ դրան կը մօտենայ և ականց կը դնէ) հայրս ըլլալու է. խեղճը դեռ կը ճնմէ. բարերար քունն իւր բիբրէն ալ հալածական եղած է... դէպ ի հոս կը մօտենայ: (կ'երթայ անկողնոյն թովր կը երաւ. տի. պսմ մը թուշ, դուսը կը բացուի և Նիւպոյտը մեռն ւնբր կը մտնէ)

ՏԵՍԻՒԼ Բ.

ՆԵՌՈՊՏՐԱՍԵՆՈՍ, ՀԵԼԷՆԷ

ՀԵԼԷՆԷ (ոտք ելնելով)

Հայր իմ, Բնէ դէպք գտե՞ք անկողնէդ հալա՞ծական, այս պահուս հոս կը բերեն:

ՆԵՌՈՊՏՐԱՍԵՆՈՍ

Երբ տեսայ խոցիդ մէջ. ուրեմն դու ալ կը հսկես դուստր իմ:

ՀԵԼԷՆԷ

Չ'եմ գիտեր ինչ ունիմ այս գիշեր, քունը խոյս կուտայ աչերէս... Բայց դու ալ այլալատ ես Հայր:

ՆԵՌՈՊՏՐԱՍԵՆՈՍ

Իմ այլալատութիւնն չ'է՛ անպատճառ... Լսէ՛ զիս Հելենէ. կը յիշես այս առաւօտ քեզ պատմածս մօրդ մահաւանն վրայոց... Կարեմ որ ըսի քեզ թէ վրէժխնդրութիւն մը, քէն մը յա՛գեցնելու համար միայն՝ Հայաստանի վրայ կուսակալ ըլլալն յանձն առած էի:

ՀԵԼԷՆԷ

Այո, Հայր, զայս ըսիր. ապա ուրեմն...

ՆԵՌՈՊՏՐԱՍԵՆՈՍ

Այս գիշեր մօրդ վրէժը յիւր սպանողաց պիտի հանեմ:

ՀԵԼԷՆԷ

Ձիս կը դողացընես, Հայր:

ՆԵՌՈՊՏՐԱՍԵՆՈՍ

Կը քստմնիս... կը հասկընամ դողդ... Բայց հանդարտէ՛ սիրտդ, Հելենէ. Արտաւազդ պիտի ապրի, քի՛ անմեղ են իւր ձեռքն, այլ Արտաւազդ միայն:

ՀԵԼԷՆԷ

Արտաւազդ պիտի ապրի, սակայն հայրն...

ՆԵՌՈՊՏՐԱՍԵՆՈՍ

Հայրն վրիժապարտ է և պիտի մեռնի... ո՛հ բաւական նախադէպ և վիշտերս լուցի, Հելենէ. այս գիշեր զԱրդուարդ մատուցին ես պիտի ըլլամ. չի պիտի թողում օտարաց գինեք պատժելու պաշտօնը. զայս երգուընցայ մօրդ արիւնաթաթախ մարմնոյն վրայ. այո, այս գիշեր Արդուարդ պիտի մեռնի և իմ ձեռքէս:

ՀԵԼԷՆԷ

Ահա, կը տեսնեմ թէ յոր կողմն ալ ուղղես հալուածն, վէրքն Արտաւազդայ և իմ սրտիս մէջ պիտի բացուի. իսկ եթէ Արտաւազդին համար զգացած սէրդ, դստերդ աղաչանքն, արտօնքն՝ կրնան ընդունել քենէ իւր կենաց շնորհքը... Լսէ՛ զիս, հայր իմ...

ՆԵՌՈՊՏՐԱՍԵՆՈՍ

Ի՛նչ, կը պաշտպանե՛ս դու մօրդ դաւաճանը... փուն տեղ մի թափեր սա արտօնքդ, Հելենէ. Արդուարդ պիտի մեռնի. մօրդ ոսկերքն իւր արիւնը ինձմէ կը պահանջեն. իւր անհանգիստ ստուերն գիշեր ցորեկ աշփոս առջև կանգնելով, վրէժխնդրութեան յապաղումը յերեսս իմ կը զարնէ և իւր գլուխը ինձմէ կը խնդրէ: Ուստի անկարելի է իւր շնորհքն, և պիտի մեռնի. զայս որոշած եմ, զայս երգուընցայ և իւր շիրմին վրայ. քեզ կը թողում զորդին, ապա թող ինձ զհայրն:

ՀԵԼԵՆԵ

Աւանդ, չէի կարծիր որ աղաչանքս և սա կաթիլներն այդպիսի տկար ըլլան չիբուցանելու հօրս աստեղութիւնը... սակայն դու մայր իմ... եթէ դստերդ արտառնալն կրնան երկնից մէջ ողորդելու քու զայրացեալ հոգիդ, դու ազդէ հօրս զգթութիւն, դու խէ իւր սիրտն այդ քնէր:

ՆԵՈՊՏՂՈՄԻՏՈՍ

Մի գանգատիր, Հելենէ, անհնարին դո՛ւ մը ինձմէ՛ր կը պահանջես. իսկ մայրդ՝ ստոյգ եմ, որ ապերախութ Դստեր մը խնդիրքը պիտի մերժէ: Անիրաւութեամբ կը տարակուսիս իմ սիրտս վրայ, Հելենէ. դու ալ կը յիշես որ մինչև հիմայ քնէն բան մ'ալ չը զլացայ, քու ակնարկելը միայն ինձ հրաման մ'էր, զոր կատարելու կը փութայիս. այսօր ալ եթէ կեանքս ուզենաս, պատրաստ եմ նուիրելու քեզ, սակայն... (անագիճ գոռ մամբ կայծուկ մը կը շարժի)

ՀԵԼԵՆԵ (զարհուրած)

Ո՛վ դիք, ինչ գիշեր...

ՆԵՈՊՏՂՈՄԻՏՈՍ

Դուտար իմ, սա գիշերս ինձ քնէն աւելի ահաւոր է, և դուռն յիշատակեց միտքս կը տանջէ. այո՛, կը յիշեմ իբր թէ այսօր ըլլար. տասը տարի առաջ... Աղքատնոր դեռ նոր վախճանած էր. երկարատակութիւն և կոխի իւր յաշորդաց մէջ կը տիւրէր... այսպէս գիշեր մը երկինքն ամպոտած էր, կը գոռար, կը փայլատակէր... յանկարծ կէս գիշերուն որոտումէն, կայծակի շայմանէ աւելի զարհուրելի դղրդում մը հնչեց. «Ի մահ Մակեդոնացիք»։ Այո՛, դեռ ականջիս մէջ կը հնչէ խառնաղանջ ամբողջին այն ահաբեկ աղաղակն, դեռ աչացս առջնն է այն դժնեայ տեւ սպրանն... յանկարծ մտայնապատ պալատը ջաւհերով, սպառնալից դէնդերով և զօրքով լեցունեցաւ. պալատիս, փողոցներուն, հրապարակին մէջ, վերջապէս՝ ամէն տեղ Մակեդոնացուց արիւնն հեղեղաբար կը վազէր: Հնգրի թէ զքեզ ի գիրկս բարձած և մօրդ ձեռքէն բռնած ի պարտէզն պալատիս կրցայ իջնալ. իսկ հոն, փայլականց առաջնորդութեամբն, դէպ ի ստորերկրեայ գեւրեզմանատունն կ'ուղղէի խուճապեալ ընթացքս: Հնն մայրդ նուաղեալ նշապապա կ'իյնար ի ստորտ չիբմի միջոյ. իսկ շայց առաջնորդութեամբ Արգուսարդայ մեր ետեւէն կը վազէին... ո՞վ դիք, ինչ դուռն էր այն ժամն, երբ զքեզ որպէս զի սպրեցընեմ, բռնադատուեցայ մայրդ ի ձեռս աւագակաց լքանելու...

ՀԵԼԵՆԵ

Ահ, հայր իմ, լու՛ն... ինչ հարկ իյել ինձ այժմ այն թշուառ դէպքին տխուր պարագաները... Հելենէ արտառնալ և աղօթք միայն կրնայ ձօնելու այսօր այդ սուրբ յիշատակիդ:

ՆԵՈՊՏՂՈՄԻՏՈՍ

Ձե՛, Հելենէ, պէտք է որ գիտնաս զայդ ամեւ...

նայն և խեղամուտ ըլլաս, թէ զո՞վ պաշտպանել կը խնդրես... կ'ըսէի ուրեմն թէ անտի հեռաւնալու բռնադատուեցայ, այլ աչք իմ միշտ հոն կը դառնային. կը շննայի խաւարին մէջէն տաւկաւին տեսնել մայրդ: Իսկ այդ փայլակն ցուլացման մէջ սուր մը տեսայ՝ որ զիւղին վրայ կը փայլատակէր. բայց այդ վայրկենական փայլումն՝ բուսեց ինձ որոշելու երեւնագործին դէմքը, զկատարին և զվայրենին Արդուարդ... Խաւարն պահ մը ծածկեց աչքերս այն սոսկալի տեսարանը. իսկ ի միտսանգամ փայլատակելն... Ահ, տեսայ որ մայրդ արդէն յօշատած էր:

ՀԵԼԵՆԵ

Ահ, մայր իմ... մայր իմ... մայր իմ...

ՆԵՈՊՏՂՈՄԻՏՈՍ

Ես ալ հոն կսկիծես կայծակնահար անշուշտ կ'իյնայի, եթէ նախախնամութիւն մ'ի՞նձ յօգւնութեան չըհասնէր. թերեւս սուրբ մօրդ ստուերն և կամ իւր վրէժխնդիր հոգին մեր պաշտպանութեան կը դիմէր. վասն զի խաւարն ծածկեց զմեզ այն վազեցց աչքերն... (Անանտայ տառարին նուիրակնս պղկնձն երկից կը հնչէ) կէս գիշեր... ո՛հ, ինչպէս անուշ կը հնչէ ականջիս այս գիշեր սա պղինձն...

ՀԵԼԵՆԵ

Ընդ հակառակն, հայր, ես կը դողամ. քու խօսքդ զիս ահա և սոսկմամբ լեցուցին, կարծեմ որ նկարագրած զարհուրելի տեսարանը աչացս առջև կը բացուի. արդէն ահաւոր երազներ զիս կը տագնապէին. իսկ երեկ արեւ մոնալուն, արիւնաթաթախ դէմք մ'ունէր հորիզոնին վրայ:

ՆԵՈՊՏՂՈՄԻՏՈՍ

Մի վախար, Հելենէ. սա պղինձն մեզ այժմ ազդ կու տայ թէ Մակեդոնացիք Արմաւիրի պարսպաց մօտ հասած են:

ՀԵԼԵՆԵ

Մակեդոնացիք...

ՆԵՈՊՏՂՈՄԻՏՈՍ

Այո՛, Ամինիթէս իւր բանական այս գիշեր Արմաւիրի վրայ պիտի յարձակի. (դղրդիւն մը կը լսուի) բայց ինչ ողորդին պալատիս և ինչ աղմուկ հրապարակին մէջ կը լսուի... արդեօք հասած են արդէն Մակեդոնացիք:

ՀԵԼԵՆԵ (պտուռահանին առջև կը վազէ, անագիճ գոռմամբ կայծակ մը կը շարժի. զարհուրած ետ կը քաշուի)

Ահ, հայր իմ, հրապարակն ջահերով, ամբողջով և զօրքով լեցունած է:

ՆԵՈՊՏՂՈՄԻՏՈՍ

Ինչ կ'ըսես, Հելենէ... Բայց մի՛ դողար, մեր պաշտպանքն ըլլալու են:

(դուռնակն աղաղակ)

ՀԱՅ ՀԱՆԴԵՍՆԵՐ

Ի մահ Մակեդոնացիք...

ԿՈՉՆԱԿ - ՍԻՍՈՒՍԱՆ

ԵՒՈՐՏՂՈՄԵՐՈՍ (դեպ ի դուռն վագելով)

Ի՞նչ կը լսեմ... հայրեն... դարձեալ սա աղա-
ղակն տասր տարիէ վերջը... ա՛հ, չի պիտի լռէ
ուրեմն... սակայն այս անգամ ի գուր կը հնչէ
կատաղութեան սա աղաղակն:

(դուռնակն աղաղակը կը կրկնէ)

Ի մահ Մակեդոնացիք:

Հնկնէ (հորը ձեռքէն բռնած)

Ա՛հ, հայր, գորգիւնն կը մօտենայ... ոտնա-
ձայն կը լսեմ և պալատիս սրահներուն մէջ...
գինուրներ կը վազեն...

(պալատին սրահներէն ձայներ)

Ի մահ Մակեդոնացիք:

ԵՒՈՐՏՂՈՄԵՐՈՍ (խաղված և սենեկին մէջ խու-
ձապեալ հոս հոն վագելով)

Ա՛հ, դաւաճանութիւն... կը կատարեն ուրեմն
Հայ Արդաւարդայ խաղաղութիւն... կը վտա-
րանջեն ապա. այո՛, ոսք շտապաւ հոս կը մօ-
տենան... Բը փախչիլ այժմ, ո՞վ դիք... Բնչպէս
գիրքն ազատի. (Հնկնէ ցուցրնելով) միթէ
դրժեց Ազգութիւն. (կայծակ մը անգիտի շալ-
մամբ կը գոռայ)

Հնկնէ

Ա՛հ... (կը վագէ հորը գիրքը կ'իյնայ. տա-
պաստակին վրայ եղած ժաժուկ դուռը կը բա-
ցոյն և Արտաւազը խռձապեալ ներս կը վագէ)
(Եարամակիւի)

ՍԵՊՈՒՆ ՄԻՆԱՍԵՆ

ՈՐԹԻՆԷ

Մոլեգին սուրն հայաճարակ
Հողաց ուժգին շատ, շատ անգամ
Գլխիս վրան մահազուգակ
Անիդն զուժով տարածում
Բոտորելով հողն հայրենեաց
Միրիւններս մըտան ի քուն,
Նախնեաց յոյսերն անհիւսացած՝
Տեսայ ծաղկին աշգոյս խոհուն:
Իսկ մ'անտես յօտար աշխարհ,
Ո՛հ, զիս բերաւ չնշտով վրտառն.
«Որբ ես, ապրէ՛ մահէն ի բաց,
Վերադարձիդ, բեկոր կոկոն՝
Կ'ընծայէ քեզ տխրալ ձօն՝
Փարած վարդիդ ուսմամբ ծաղկած»:

ԱՍՈՐԻՐ

Մեր մէջ շատ քիչ թուով թերթեր եղան որ
երկար ապրեցան. անոնք պայքար մը կը մղեն
հրապարակին վրայ ու ծնունդնին չը տեսած
արդէն գերեզման կ'իյնան. Կոլլնակ աստեղմէ չէ,
տարեմուտով ըլլորեց ան իր գոյութեան քսան
տարիները որ քիչ մը պատկառանք կ'ազգէ. Եր-
կարակեցութիւնը կ'ըսեն լաւ սննդառութեան
արդիւնքն է, և ստուգիւ Կոլլնակ երբեմն ճար-
տար գրիչներու շնորհիւ ոչ միայն իր ընթեր-
ցողները կ'առիչքնէ այլ ստուար քանակութեամբ
յաճախողներ ստեղծած է:

Թերթը: — Ասկէ քսան տարի առաջ պէտք է
ըսել թէ Ամերիկահայութիւնը արդի եռուգեղ
և մատաղական մշակոյթը շունչը, սակայն առ-
տաստմանի մէջ չուտով թեւաորուեցաւ ան՝ եր-
ջակութիւնը գտնողի մը պէս. և ըստ իս հա-
մայնքը կամ անհատը ինչ որ կ'արտադրէ կամ
կը զգայ՝ անդիմադրելիօրէն միշտվայրին ազդե-
ցութիւնն է:

Կոլլնակի հրատարակչական ընկերութիւնը իր
չաբաթաթերթին առաջին թիւը լոյսին տուաւ
1900 ղէկը. 15ին. գրական տեսակէտով, մինչև
իր արբերութիւնը՝ շատ պիտի ծաւալ մը ունի, չորս
թուով՝ քիչ մը մեծադիր. Հրատարակիչ ընկե-
րութիւնը առաջին խմբագրականով պարգեւ է
իր նպատակին և ուղղութիւնը. և ճիշտ այն է՝
ինչ որ մեր կարգ մը թերթեր իրենց իբրև հե-
ռակէտ մը ունին, և բռնադատ ճիշտով մը պէտք
են անոր ձևով: «Ամէն բանէ առաջ Ազգային
թերթ մը պիտի ըլլայ Կոլլնակ»: «Հայ ազգը
սակայն անգամն է միայն ամբողջի մը». և այս
ամբողջն է համամարգրակութիւնը, որուն քաղա-
քակրթութեան և սկզբունքներուն տեղեակ պիտի
ընէ իր ընթերցողները: «Եւ կրօնական թերթ
մ'ալ պիտի ըլլայ Կոլլնակ, կրօնը կենսի մէջ
արդարութեան, սիրոյ ու սրբութեան կենսիքը,
Աստուծոյ կենսիքը մարդկութեան մէջ»: Ու յե-
տոյ Կոլլնակ նկատելով որ հայը ամէնի զգացող
ժողովուրդ մըն է քան խորհող ու դատող՝ այդ
պարագան ալ կը խոստանայ սովորեցնել՝ գիտա-
կան բաժինով մը, պատմական, առողջաբանա-
կան, ընկերաբանական:

Բնական է թէ իր այս մեծ գազափարը ոչ թէ
մէկ՝ այլ շատ մը տարիներու գործ է և ձեռ-
նարկին յաշոգութիւնը՝ իր տոկունութենէն կա-
խուսն ունէր. փասն տարուան չաբաթաթերթ
մը թղթատեղի և անոր քննադատական ընել, եթէ
ոչ ինձի՝ որուն մեծ մասը արդէն աչքէ անցու-
ցեր եմ և հետքերուն հետեւած, ընթերցողներուս
գուցէ տաղտկալի ըլլայ. դիւրութեան համար
1919ի տարեշրջանը միայն կ'առնեմ:

Ամէն ազգ իր ոսկեդարն ունի, ամէն գրագէտ
իր գլուխ գործոցը, ամէն թերթ իր ծաղկածուն
շրջանը: 1919 թուականը դեռ նախորդ տարի-